ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» փետրվարի 2025թ. ՈՄՈ/288 -Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N ՄՈ/412-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով «Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2025 թվականի փետրվարի 25-ի N 19 և «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2025 թվականի փետրվարի 24-ի N 23 գրությունները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 27-ի«Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/412-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N 7 հավելվածի 13-րդ կետում «Գրիգորյան Սիրուն» բառերը փոխարինել «Գրիգորյան Անի» բառերով,

2) որոշմամբ հաստատված N 9 հավելվածի 14-րդ կետում «Քյարամյան Իրինա» բառերը փոխարինել «Կարապետյան Մերի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-02-28 09:40:13 GMT+4
Հավաստված է ԷԿԵՏ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՄԵԽԱԿՅԱՆ***